

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԲԵԼԵԱՆ

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԳՐԱԳԷՏ ՌԻ ՔՆՆԱԴԱՏ

Յ. ՕՇԱԿԱՆԻ

1905 — 1945

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արեւմտահայ Գրականութիւնը վերջի փառքը դարձաւ իր գործունեութեան ընթացքին, սրտառուչ յարասեւութեամբ մը շարունակեց ինքզինքն արդիւնաւորել, նոր ուժերուն հետ, հին արժէքներուն ալ գործակցութեամբը։ Անվերապահ կրնանք յայտարարել թէ այդ հին ուժերուն մէջ Յակոբ Օշական կը ներկայանայ բացառիկ շնորհներով եւ յարգիւններով։

Յ. Օշական բերած է արեւմտահայ վէպին ծաւալի եւ որակի դեռ չգերազանցուած յաւելումներ։ Ծանր սազմապնդումով բայց անսպառ կորովով մը գործադրուած այս հիգը մեր պատմութեան, մեր վեպի բարեբարած է հարազատ ու արդար գեղեցկութիւններով։ Օշականի վիպական գործը թէւ անաւարտ՝ բաւ է զինք մեր գրականութեան տիրական դէմքը դարձնելու։ Անոր երազն էր փրկել իր ժողովուրդին մնացածը։ Հայ գիւղը, մայր փառքը յասակը կը կազմեն այդ վէպին։

Յ. Օշական արեւմտահայ քաւորներէն բերած է նմանապէս քանկ յաւելումներ, երբ նկատի առնուի Սփիւռքի քաւորական գրականութեան մակարդակը։ Մեր անցեալէն, մեր ողբերգութենէն եւ մեր Սփիւռքէն իր գլխաւոր նիւթերը առնող քաւորագիր Օշականը այդ նիւթերու մշակումը իրագործած է մեր ներկայ մշակոյթէն վեր չափանիւթերու վրայ։ Տառնէն աւելի խաղեր արդիւն են այդ ցանկութեան։

Յ. Օշական արեւմտահայ իմացական շարժումին բերած է ամենալայն իր մասնակցութիւնը, ոչ միայն պարբերաբերութեան մէջ օրումն՝ գիրքերուն, գրական հարցերուն շուրջ խոր, լայն, անպայման նոր տեսակէտներով, կէտներով, այլ եւ ի-

բազործած է մեր մէջ գրեթէ ցարդ անկարելի նկատուած անդրանիկ համադրում մը Արեւմտահայ Գրականութեան բոլոր արժանատիքները նուաճումներուն: Իր *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան* անունը կրող շատ ընդարձակ աշխատասիրութեամբ, որմէ լոյս տեսած առաջին հատորը հանրութեան սեպհականութիւնն է արդէն, Յակոբ Օճական կը հանդիսանայ ոչ միայն առաջնակարգ պատմիչ մը՝ հայ գրականութեան, այլ եւ հայ հոգին յուզող ճազնապներուն կախարդական տարադարձիչը:

Յ. Օճական ստեղծած է սպաւորապաշտ գրականութիւն մը, ուր միտքը ինչպէս սիրքը, ներկան ինչպէս անցեալը, մեր մեակոյթը եւ հին ու նոր արեւմտեան եւ արեւելեան մեծ մեակոյթներու ամենէն գոյսը ապրումները իրարու կը միանան: Իր վերլուծումները հիմնելն ու նորերէն, իր հէփաքները, իր սպաւորութիւնները կը պարզեն ոչ միայն իմացական շատ ընդարձակ հետաքրքրութիւններ, այլ եւ կը վերածուին ամենէն ճաշ ապրումներու: Նարեկացի մը, Սայեաթ - Նովա մը, Բերթուած մը վարուծանէն կամ Պէթիկթաշեանէն՝ ամուր համար կեանքի լայն պահեր են: Սնոնք որ տեսած են՝ զինքը ուրիշները բացատրելու աշխատանքին մէջ, չեն կրնար մոռնալ այն խոր, քաղցր, ընդհարեող ապրումի պահերը, որոնք մեր մեծ արժէքները վերանորոգ կը մատուցանեն բազմութիւններու վայելումին:

Յ. Օճական իր այս աշխատանքները կատարած է նորագոյի, ստեղծողի իր ուժերէն անդին ձգողի սիրական մտահոգութեամբ: Իրմէ փորձուած բոլոր սեռերը՝ իրմով *անեղած են*, ըսել կ'ուզենք ստացած են նոր կերպարանք: Յ. Օճական դարձնալ այդ աշխատանքներուն համար գործածած է մեր լեզուն կորովով մը, գեղեցկութեամբ մը, որոնք առանձին յաջողութեան են:

Քանակի, ինչպէս որակի մէջ, այնքան ուշագրաւ այս արդիւնքը, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը արժան կը դասէ հանրային լայն գնահատման, նախաձեռնելով Յ. Օճականի քառասունամեայ գործունէութեան յօրելանքը, վստահ թէ հայ հասարակութիւնը պիտի ընդառաջէ մեր փափաքը, բերելով մեր գրականութեան մեծ մեակին իրեն արժանի գնահատմանը:

Այս նպատակով Յոբելիական Կեդրոնական Յանձնաժողով մը կազմուեցաւ Ս. Աթոռիւր մէջ, նախագահութեամբ Ա.մեն. Ս. Պատրիարք Զօր եւ հոգեւորական եւ աշխարհական անդամներէ, ընելու համար հետեւեալ կարգադրութիւնները:

Ա. — 1945 եւ 1946ը յայտարարել Յոբելիական Տարի, որու ընթացքին Սփիւռքի բոլոր կարեւոր կեդրոններու մէջ պիտի կազմուին այս հանդէսները գործադրութեան դնելու համար տեղական ուժերէ հանգամանաւոր մարմիններ:

Բ. — Մեր զբաղանդութեան արժանաւոր այս մակիին համար սարժուած հանդէսները ընդունակ ընել գոյացնելու հիմնադրամ մը, որով կարելի ըլլայ Մամուլին յանձնել հրակայական իր ձեռնարկը, Արեւմտահայ Գրականութիւնը համապատկերող: Այս ընդարձակ աշխատանքին դուրս Օսկան ունի լոյսին սպասող բազմաթիւ ծանր աշխատութիւններ, — վէպ, քառերոն, ռաբաթապատէս էջեր եւ մեր հին մատենագրութեան շուրջ ուսումնասիրութիւններ:

Յոբելիական կեդրոնական Յանձնաժողովը այս զեկոյցով կը բանայ Օսկանի Յոբելիական Տարին, եւ կը խնդրէ որ Հայ Մամուլը, որուն մատենանդն աշխատաւորը եղաւ ան, բանայ իր էջերը, հրատարակելու մերկայ Յայտարարութիւնը ամբողջութեամբ:

Կ Ա Ջ Մ

ՅՈՐԴԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- | | |
|--|------------|
| 1. ԱՄԵՆ. Տ. ԿԻՐԵՂ Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՐ | ՆԱԽԱԳԱՀ |
| 2. ՀՈԳ. Տ. ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԵՐՏԷՐԵԱՆ | |
| Լուսարարական Ս. Արաբոյ | ԱՏԵՆԱԴՊԻՐ |
| 3. ՀՈԳ. Տ. ՍԵՐՈՎԲԷ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ | |
| Տեսուչ ժառ. եւ Ս. Թարգմ. Վարժարաններու | ԽՈՐՀՐԴԱԿԱՆ |
| 4. ՄԵՄ. ՏԻԱՐ ՏՕԺԹ. Վ. ԳԱԼՊԻԱՆ | ԱՏԵՆԱՊԵՏ |
| 5. ՄԵՄ. ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ԳԷՈՐԳԵԱՆ | ԳԱՆՁԱՊԱՀ |
| 6. ՄԵՄ. ՏԻԱՐ ՏՕԺԹ. Ս. ՊՈՏՈՍԵԱՆ | ԽՈՐՀՐԴԱԿԱՆ |
| 7. ՄԵՄ. ՏԻԱՐ Կ. ՄԻՀՐԱՆԵԱՆ | » |

Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ն

Ա. — Հնուագիտ, ուղեւոր, շնորհաւորական գիր կ'ուղղուին Կեդրոնական Յանձնախորհրդի Դիւանին, Սէնթի հասցեով:

Բ. — Դրամական առաքումները կը կատարուին Կեդրոնական Յանձնախորհրդի հասցեին:

COMITÉ CENTRAL DE JUBILÉ OSHAGAN

PATRIARCAT ARMÉNIEN

JÉRUSALEM-PALESTINE